


Stop - Chief Dept of Justice

Free on Top

891.995

S-37



2011-07

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 18

891.99 Մ

S-37 կր

ՍՏ. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ԲՈՒՏՈՆԸ

7183



Թ Ի Ց Լ Ի Զ

Տպարան Ն. Ս. Ղանեանի, Պոլից. 7.

1914

Բ Ո Ւ Տ Օ Ն Ը

I

Նրանք երեք հոգի էին, երեքն էլ շաղկապւած փոխադարձ բռնն սիրով: Այդ սէրը բառերով նրանք երբէք չէին արտայայտում, քանի որ մէկին նրանցից խօսելու ընդունակութիւն չէր տրւած, միւսը լռակեաց ստորադրեալ պաշտօնեայ էր, որն ըստ իր պաշտօնի ու դիրքի պէտք է քիչ, շատ քիչ խօսէր, մանաւանդ իր մեծերի հետ, ու կատարեալ ճշտութեամբ կատարէր իր պարտաւորութիւնները. երկրորդը երեքից ակազն էր— առաջինի տէրը, իսկ երկրորդի իշխանաւորը: Երեքն էլ մի փոքրիկ սերտ ընտանիք էին կազմում, բարութեամբ ու լուռ սիրով տոգորւած ընտանիք: Այդ սիրոյ ու բարութեան աղբիւրն էր ընտանիքի մեծի մարդասէր հոգին:

Ընտանիքի մեծը մի երիտասարդ սպայ էր, պօրուչիկ*) Եգօր Սաչատրեանը, լռակեաց ստորադրեալ պաշտօնեան նրա ծառայ դենշչիկ**) Ֆիլիպպ Ստարիկովը էր, իսկ խօսելու ընդունակութիւնից զուրկ նրանց կենակիցը պօրուչիկի շնիկ Բուտօնն էր, որը շատ չարածճի էր, բայց անչափ խելօք, կարգապահ, զինւորական կարգապահութեան մէջ վարժուած:

Բուտօնին գտել էր դենշչիկ Ստարիկովը: Պօրուչիկը նր-

*) Պօրուչիկ, поручикъ, երեք աստիճան ունեցող սպայ, օֆիցեր:

**) Դենշչիկ նշանակում է օրապահ զինւոր. ծառայութեան է տրւում օֆիցերին ու միշտ ընակուում նրա մօտ:

րան ինչ որ անդ է լինում ուղարկած: Քաղաքի ծայրի այգիներէց մինի փշի տակ նա ինչ որ թարմ հողակոյտ է նկատում, որտեղից խուլ նււոց է լսում. գարմացած մօտենում է. հողի երերումից իսկոյն հասկանում է, որ մի ինչ որ կենդանի բան կայ հողակոյտի տակ. ձեռքով հողակոյտը քանդում է ու անսնում թաղած այնտեղ մի քանի հատ նորածին շան ձագեր, որոնցից միայն մէկն է լինում կենդանի, դեռ շատ փոքր, աչքերը բանալու անընդունակ տակաւին: Բարեսիրտ դենշչիկը վերցնում է նրան, մաքրում հողից ու բերում տուն, ներկայացնում իր սպային: Պօրուչիկն ընդունում է շնիկին ու պատւիրում ամեն օր թարմ կաթն առնել նրա համար ու առատօրէն կերակրել: Շնիկը մեծանում, աճում է օրէցօր. աչքաբաց, քիչ-շատ խելահաս դառնալուն պէս ճանաչում է իրեն խնամողներին ու մտերմանում նրանց հետ:



Պօրուչիկի բնակարանի բակում մի վարդի թուփ է լինում, որի վրայ սովորականից շատ վաղ մի կոկոն է գոյանում: Պօրուչիկը պատւիրում է դենշչիկին ուշի ուշով հսկել, պահպանել այն կոկոնը, լաւ պահպանել, որ ոչ ոք չը պոկի, որ ինքն առաջին վարդով, սովորականից շատ շուտ բացւած վարդովը պճնւած իրենց գնդի սպայական ժողովարանում գարմացնի իր ընկերներին: Բայց այդ փափագն անկատար է մնում. մի օր գալիս է նա ծառայութիւնից ու տեսնում կոկոնը պոկած. վրդովւած հարցնում է ծառայից՝ ո՞վ է պոկել,

ու իմանում, որ շնիկն է արել այդ. բացւող կոկոնի միջից նկատուող վարդի կարմրուցը նրան ուտելու բան է թւացել. բերանն է առել կոկոնն ու պոկել:

Բարի պօրուչիկը չը պատժեց ոչ շնիկին և ոչ դենշչիկին, որն այնչափ անուշադիր էր գտնւել դէպի իր իշխանաւորի պատուէրը: Նա դարձաւ շնիկին ասելով՝ ո՞ւր է վարդի կոկոնը,



նր, ո՞ւր է բուտօնը, ինչո՞ւ ես պոկել այն, ա՛ շարածճի: (Պօսում էր ոռւսերէն): Շնիկն այդ հարցերին պատասխանում էր պոչի շարժումով, աչքերը յառած իր պօրուչիկին, շեշտակի նայելով նրա դէմքին՝ կասես նրանից ներողութիւն լինէր խնդրելիս: Այդ օրից շնիկի անունը մնաց Բուտօն, որ ոռւսերէն կոկոն է նշանակում:

II

Բուտօնը մեծացաւ, բոլորեց հասակը, բայց մարմնի կազմւածքով փոքր մնաց. սովորական

պաւարտ անային կատուի մեծութիւն ունէր մօտաւորապէս: Մարմինն ամբողջովին սև էր՝ բացառութեամբ կրծքի ու թաթիկների, որոնք սպիտակ էին: Պոչը լաւ ծալած ու գաւակին դրած էր պահում միշտ: Թուլանում էր պոչն ու կախւում, երբ վատ էր լինում տրամադրւած:

Թէ նրան և թէ իր դենշչիկին պօրուչիկն անչափ սիրում էր. չէր բարկանում նրանց վրայ, կոպիտ չէր խօսում հետնեւորը, ամենաթեթև պատժի անգամ չէր ենթարկում նրանց, երբ մէկի կամ միւսի շնորհով նրա բացակայութեան ժամանակ որ և է զանցառութիւն էր տեղի ունենում տանը: Չը նայած, որ Ստարիկովը հասարակ զինուոր էր, որն օֆիցերի հետ ազատ խօսել-ասել, ուտել-խմել կամ նստել նրա մօտ, նրա ներկայութեամբ չէ կարող, բնաւ իրաւունք չունի, նա շատ անգամ սեղանակցում էր իր իշխանաւորին, ճաշում, ընթրում էր նրա հետ, պատշաճութեան սահմաններից դուրս չը գալով բնաւ. նոյն իսկ զրուցում էր նրա հետ, երբ պօրուչիկը հարցեր էր տալիս նրան, խօսեցնում այդպիսով:

Բուտօնը միշտ պօրուչիկի հետ էր՝ թէ տանը, թէ դրսում, թէ պաշտօնավարելիս նոյն իսկ: Պօրուչիկի պաշտօնավարութեան մէջ եղած ժամանակ նա երբեմնակի, յատուկ ստիպմամբ, մնում էր տանը, դենշչիկի մօտ խոհանոցում:

Պօրուչիկն ու դենշչիկը Բուտօնին սիրեցին ինչպէս ամենամտերիմ հարազատի, առանց որի օր անցկացնել անկարելի է: Նրանց միատեսակ խստակեաց զինուորական կեանքը Բուտօնն էր քաղցրացնում անչափ զրաւիչ իր արտաքինով՝ անմեղ գառնուկի տեսքով, խելօք աչքերով, խելացի, կարծես խօսող հայեացքով ու նաև իր պէս-պէս չարաճճութիւններով, զարմանալի ըմբռնողութեամբ, հետաքրքրական, մազալու հաջրցով ու անօրինակ քաջութեամբ: Նա խրոխտ դէմքով, անվեհեր քայլաձքով ու սպառնալի մոռոցով՝ պօրուչիկի հետ զբօսնելիս՝ մօտենում էր կազմաւորով իրենից շատ մեծ շների, ամեհի կատաղի շների նոյն իսկ. յաճախակի կուռում էր նրանց հետ ու պատուով դուրս գալիս այդ կուռից:

III

Իր պօրուչիկի հետ միասին նա յաճախակի այցելում էր զինուորների մարզանքի վայրը, ներկայ էր գտնուում զինա-

վարժութիւններին ու գորախաղերին: Դիտելով զինուորների խաղերը, նա ձեռք բերաւ մի հմտութիւն — յետևի ոտների ու նստաձքի վրայ կանգնելը. յանկարծակի ու բոլորովին անսպասելի կերպով արտայայտեց նրա այդ շնորհքը: Մի անգամ պօրուչիկ եգօրը սովորական մարզանք էր կատարել տալիս իր վաշտին*): Համաչափ քայլերով վաշտը յետ ու առաջ էր շարժուում: Պօրուչիկը յանկարծ հրամայեց վաշտին ձգւել մի գծով ու հանգիստ կանգնել: Վաշտն բոպէսպէս կատարեց հրամանը. զինուորները մի ակնթարթում ձգւեցին մի գծով, ըստ իրենց՝ շերենգայով, արձանացան ու բևեռեցին անթարթ



աչքերը պօրուչիկի վրայ. Հէնց նոյն բոպէին մի անօրինակ դիպած տեղի ունեցաւ. զինուորների վերին աստիճանի լուրջ ու խրոխտ դէմքերի վրայ ժպիտ նկատեց, մի քանիսը փրթկացին նոյն իսկ: Պօրուչիկի մազերը փշաքաղեցին. աննկա-

*) Վաշտ—роты, ջոկատամաս, բաղկացած է լինում մօտ հարիւր զինուորից:

րագրելի զայրոյթով բռնկեց նա: Չինւորական երկաթէ կարգապահութեան այդպիսի խախտում նա առաջին անգամն էր տեսնում. իր խիստ կարգապահութեամբ ու ռազմական աննկուն ոգով յայտնի Տենզինեան գնդում տեսած ու լսած բան չէր այդ: Նկատելով իրենց իշխանաւորի զայրոյթը, աւագ-ենթասպան*), զինւորական պատիւ տալով պօրուչիկին, մի քանի անկապ բառերով հասկացրեց նրան ինչու՞ն է բանը: «Այնտեղ, այնպէս որ, — ասաց նա, — ձեր ետևում, ձեր շնիկը, ձերդ ագնուութիւն»... Կարգապահութեան մէջ եփլած-տապակած աւագ-ենթասպան փրթկաց ու չը կարողացաւ շարունակել: Պօրուչիկը յետ նայեց ու ինչ տեսաւ. Բուտօնը կանգնել էր յետևի ոտների ու նստածքի վրայ ու թաթիկներին մէկը բարձրացրել՝ կարծես զինւորական պատիւ լինէր տալիս իր պօրուչիկին ու նրա զինւորներին: Հրճւանքն ընդհանուր դարձաւ: Պօրուչիկը ներեց վաշտին կարգապահութեան խախտումն ու շարունակեց իր պարապմունքները, մատով սաստելով Բուտօնին, որ այլևս այդպիսի հանաքներ չանի նա զօրքի հետ ու չը խանգարի իրենց: Բուտօնի այդ ձիրքը գնալով աւելի ու աւելի զարգացաւ, նա յետևի ոտների ու նրստածքի վրայ կանգնում էր ու թաթիկները վեր ու վայր շարժելով ողջունում առաւօտներն իր պօրուչիկին, ողջունում էր այդ ձևով պօրուչիկին այցելութեան եկող նրա ընկերներին, ողջունում էր զինւորներին՝ զօրանոցն այցելած ժամանակ:

Դենչիկ Ստարիկովը Բուտօնին զինւորական պատիւ տալ սովորեցրեց. կանգնում էր ու աջ թաթիկը բարձրացնում մինչև ականջն ու թեքում. մօտ երեք-չորս ընկեր կարողանում էր այդ գրութեան մէջ մնալ: Յետևի ոտների ու նստածքի վրայ կանգնում էր ու թաթիկները շարժում, երբ ուտել էր ուզում, երբ ցանկանում էր, որ պօրուչիկը նրան իր հետ զօրանոցները տանի կամ գրօսելու վերցնի: Երբ գրօսավայրից

*) Աւագ-զինւոր — старший унтеръ-офицеръ.

տուն վերադառնալու ժամանակը հասնում էր, նա նոյն ձևով հասկացնում էր պօրուչիկին, որ ժամանակ է տուն գնալ. կանգնում էր, մէկ պօրուչիկի դէմքին նայում, մէկ հայեացքը դարձնում դէպի տուն կամ թաթիկները մեկնում տան կողմը: Յետևի ոտների վրայ կանգնելով կամ թաթիկները շարժելով նա ուղղակի զրուցում էր պօրուչիկի ու դենչիկ Ստարիկովի հետ:

Զօրանոցներից մէկի բակում, որտեղ սովորաբար պօրուչիկը պարապում էր իր վաշտի հետ, երբեմնակի տեղի էին ունենում այսպիսի տեսարաններ. պօրուչիկի առաջին վազող Բուտօնը նրանից շուտ էր մտնում զօրանոցի բակը. պօրուչիկը, պատահելով ընկերներից ուր և է մէկին, մի քանի ընկերով ուշանում էր նրա հետ զրուցելով. զինւորներն օգտուում էին նրա բացակայութիւնից ու զւարձանում Բուտօնով. որ և է մէկը նրանցից, յաճախակի հէնց ինքը աւագ ենթասպան, աղաղակում էր բարձրաձայն՝ «վաշտ, հանգիստ. ողջոյն Բուտօնին»: Վաշտն իսկոյն արձանանում էր ու անթարթ հայեացքը բեռում Բուտօնի վրայ: Երբ հրացաններով էին լինում զինւորները, ըստ սահմանած կարգի ողջունում էին նրան հրացաններով, վերջիններս ուղղահայեաց բռնելով՝ երկու ձեռքով, կրծքի ուղղութեամբ, սւիները դէպի վեր, դէպի գլուխներն ուղղած: Բուտօնն իսկոյն կանգնում էր յետևի ոտների ու նրստածքի վրայ ու թաթիկները վեր ու վայր շարժում՝ կասես շնորհակալութիւն լինէր յայտնելիս իրեն զինւորական պատիւներ տւող քաջարի վաշտին: Նա դարձաւ վաշտի շնիկը, վաշտի սիրելին:

IV

Մի անգամ մեծ զօրահանդէս էր. ամբողջ գունդը հանդիսաւոր համազգեստներով, դրօշակով, հրացաններով ու երաժշտախմբով շարւել էր զօրանոցների մեծ հրապարակում: Մաթթանքից յետոյ շրջանային զինւորական հրամանատար գեներ

րալը, որն ուրիշ քաղաքից գնդի տեսութեան էր եկել, վաշտերն առանձին-առանձին դիտելուց յետոյ կանգնեց հրապարակի մէջ տեղում ու ողջունեց գնդին և շնորհակալութիւն յայտնեց նրան օրինակելի ծառայութեան համար: Ի պատասխան հազարաւոր ձայներ աղաղակեցին «ուռւ», նւագեց երաժշտախումբը. զինւորները հրացանները բռնեցին ողջոյնի համար սահմանած ձևով, իսկ սպաները՝ գեներալի առաջին արձանացած՝ աջ ձեռքերը բարձրացրին դէպի գլուխները, շարքով սեղմած մատները կպցրին ճակատներին, կողքից, ու այդպիսով զինւորական պատիւ տւին իրենց զօրապետին: Այդ հանդիսաւոր ըոպէին յանկարծ փրթկոց լսեց սպայակոյտի մէջ. շատերը ժպտացին. գեներալը նոյնպէս. մեծ դժւարութեամբ իրենց զսպեցին մինչև երաժշտախմբի նւագի վերջը: Վերջացաւ նւագումը. դադարեց որոտընդոտ «ուռւան»: Սպաները ցած թողեցին ողջոյնի համար բարձրացրած ձեռքերը:

Գեներալը խնդալով մօտեցաւ սպայակոյտին ու սկսեց փաղաքջել այն շարաճճուն, որն այն հանդիսաւոր ըոպէին նըրանց զւարճութիւն պատճառեց: Այդ շարաճճին Բուտօնն էր: Բանից դուրս եկաւ, որ նա դենշչիկ Ստարիկովի հետ եկել էր հանդիսավայրը ու, նկատելով իր պօրուչիկին սպաների մէջ, մօտեցել էր նրան ու կանգնել սպաների խմբի մօտ, չը նկատելով սակայն իր պօրուչիկից, որը պատւիրած է լինում դենշչիկին այդ օրը պահել նրան տանը: Երբ նւագում է երաժշտախումբը, երբ սպաներն ու զինւորները ողջոյնի շարժում են գործում ու արձանանում, Բուտօնն իսկոյն կանգնում է յետևի ոտների ու նստածքի վրայ, արձանանում ուղղահայեաց դիրքով, աչքերը բևեռում գեներալի վրայ, աջ թաթիկը վեր բարձրացնում, թեքում. դէպի գլուխը ու պ. պ. սպաների հետ միասին ողջունում այդպիսով նորին գերազանցութեան:

Հանդիսաւոր քայլերթից յետոյ, երբ զօրահանդէսը վերջացաւ, բարեսիրտ գեներալն իր կառքը հրաւիրեց պօրուչիկ Եգօրին իր շնիկով ու նրանք միասին, գնդի հրամանատարի

ու միւս բոլոր սպաների հետ, գնացին գնդի ժողովարանը, որտեղ մեծ խնջոյք էր սարքած զօրահանդէսի առիթով: Գեներալն այնտեղ իր ձեռքով ճաշկերոյթի ընթացքում քանիցս անգամ կերակրեց Բուտօնին, որը լաւ մարզած զինւորի



պէս ամբողջ ըոպէներով յետևի ոտների ու նստածքի վրայ կանգնած էր մնում նորին գերազանցութեան առաջին, որին, երբ պահանջում էր այդ նրանից իր պօրուչիկը, երբեմնակի զինւորական պատիւ էր տալիս ու մեծ զւարճութիւն պատճառում այդպիսով սեղանակիցներին:

V

Սկսեց ուս. երապօնական պատերազմը: Այն գնդից, որտեղ ծառայում էր պօրուչիկ Եգօր Խաչատրեանը, մի քանի երիտասարդ քաջարի սպաներ ցանկութիւն յայտնեցին մասնակցել պատերազմին. նրանց թւում էր նաև պօրուչիկ Եգօրը: Իշխանութիւնը սիրով կատարեց նրանց ցանկութիւնը, քաջ

սպաներին ուղարկեց պատերազմ: Սաչատրեանին, ինչպէս և միւս սպաներին, ոչ ոք չէր ստիպում գնալ պատերազմ: Նրանց գունդը բոլոր ժամանակ պէտք է մնար Կովկասում պետութեան այդ մասի ապահովութեան համար: Նա իր անձնագոհ ընկերների պէս գնում էր իր ազատ կամքով: Թէև գնում էր միանգամայն կամովին, բայց սաստիկ մտատանջուում էր միևնույն ժամանակ. նրա կամքի հակառակ ծանր հոգեմաշ վիշտը կաշկանդել էր նրա սիրտը. նրան մտատանջում էին ոչ թէ պատերազմի դաշտում քաջ զինուորին սպասող արհաւիրքները, այլ այն, որ ցրիւ էր տալու իր տունն ու տեղը, երեք սիրավառ հոգուց բաղկացած իր ընտանիքը, որ բաժանուելու է, գուցէ յաւիտեան, հեռաւոր գիւղում ապրող իր ծերացած նանից, քոյրերից ու եղբայրներից, բաժանուելու է իր շնիկից ու դենշչիկից, որոնք անչափ սիրում էին նրան, որոնց նա ինքը նոյնչափ սիրում էր: Տխուր-տրտում ու լուռ նրանք նայում էին իրար դէմքի. մտազբաղ էին սաստիկ:

Բուտօնը կորցրեց իր սովորական աշխոյժը. կարծես բընագգամբ նա զգում էր իրենց գլուխները գալիքը: Դենշչիկ Ստարիկովը պորուչիկից ծածուկ լաց էր լինում. քանդուում էր սիրով տոգորւած նրանց ընտանիքն ու վերջանում այդպիսով նրանց երջանիկ կենակցութիւնը, գուցէ յաւիտեան նրանք բաժանուում էին միմեանցից. հեշտ չէր այդ տանել:

Ի՞նչ է լինելու Բուտօնի վիճակը, ո՞ւմ ճանկն է ընկնելու նա, ո՞վ է նրան պահելու ու խնամելու, — այդ անչափ մտատանջում էր թէ պորուչիկին և թէ դենշչիկին:

VI

Երբ պորուչիկ Սաչատրեանին հրամայեց ճանապարհել պատերազմի դաշտը, միաժամանակ յայտարարեց նրա դենշչիկին, որ նրա ծառայութեան ժամանակամիջոցը լրացել է, որ նա բոլորովին ազատ է, հետևաբար իր պորուչիկին ճանապարհելուց յետոյ կարող է գնալ իրենց տուն, հայրենիք:

Դենշչիկ Ստարիկովը ուրախանալու փոխարէն սաստիկ տխրեց. այն, որ նա պէտք է ընդմիշտ բաժանուէր իր բարի պորուչիկից ու իր սրտի կտոր Բուտօնից, աննկարագրելի վիշտ պատճառեց նրան: Անհնարին գտնելով նրանցից բաժանուելը, նա որոշեց իր պորուչիկի հետ միասին կամովին պատերազմ գնալ: Երբ իր ցանկութիւնը յայտնեց նա պորուչիկին, վերջինս սաստիկ զգացեց, բայց մերժեց նրա գոհաբերութիւնը, բուռն շնորհակալութեամբ հանդերձ խորհուրդ տւեց նրան գընալ Ռուսաստանի խորքերում գտնուող իր հայրենի գիւղը, որտեղ սպասում էին նրան ծերունի ծնողները: Ստարիկովը չը լսեց իր պորուչիկին. նրա որոշումն անխախտ էր. յայտնեց, որ երգւել է նրանից, իր բարի պորուչիկից, չը բաժանուել վտանգի օրերին, ուստի պէտք է գնայ ծառայի նրան այնտեղ ևս, արհաւիրքների վայրում, պատերազմի դաշտում: Պորուչիկը յուզւած համբուրեց նրան ճակատից ասելով՝ «Շընորհակալ եմ, աղանեակս. գուցէ Աստուած տայ ողջ-առողջ վերադառնանք. գնանք, երբ այդպէս է»:

Ստարիկովը դիմեց գնդի հրամանատարին՝ պաշտօնական հրաման ստանալու նրանից ուղեկցել իր սպային: Հրամանատարը մեծ հաճութեամբ կատարեց նրա ցանկութիւնը. գովեց, անչափ գովեց նրա այդ քայլը. այնքան յուզւեց նա, որ ժողովեց ամբողջ գունդը ու բոլոր զինուորների և սպաների առաջին յայտարարեց, որ դենշչիկ Ֆիլիպպ Ստարիկովի քայլը հերոսութիւն է, որ նա իր այդ խիզախ քայլով իր անունը գրեց գնդի շարքերում ծառայած հերոսների պատմութեան էջերում. բոլորի ներկայութեամբ հրամանատարը համբուրեց նրա ճակատը ու ողջերթ մաղթեց նրան

VII

Ստարիկովի ուրախութեան չափ ու սահման չը կարոնց չուրախանար անր, երբ չէր բաժանուելու իր սիրելիներին՝ պորուչիկից ու Բուտօնից: Նա համոզւած էր, որ պորուչիկը

Բուստօնին էլ կը վերցնի իրենց հետ, որ այդպիսով, երեքով, իրենց ամբողջ ընտանիքով, կը փնան պատերազմ ու իրարից չեն բաժանուիլ բնաւ. կամ կապրեն միասին, կամ կը մեռնեն միասին: Թէև վտանգաւոր վայրերում են լինելու, արհաւիրքները ճանկերում են գտնուելու միշտ, բայց միասին են ապրելու դարձեալ ու շարունակելու են վայելել իրենց փոխադարձ սիրոյ քաղցրութիւնը:

Պօրուչիկը ծախեց ու բաժանեց իր տնային իրերը. շատ քիչ բան վերցրեց իր հետ. պէտք է հեռու, շատ հեռու ճանապարհ գնային. անհնարին էր շատ բան տանել:

Մի բան էր ամենից շատ տանջում պօրուչիկին—այն՝ ի՞նչ անել իր Բուստօնին, ինչպէս տնօրինել նրա վիճակը. տանել պատերազմ, անհնարին էր. թողնել որ և է ընկերի կամ ծանօթի մօտ անտէր-անտէրունչ, անչափ վշտալի էր նրա համար: Ընկերներից մէկին նա խոստովանեց, որ իր շնիկի մեղամաղձոտ տխուր հայեացքը տեսնելիս ու նրան սպառնացող անտէրութիւնը երևակայելիս այնքան է խղճահարում ու տանջում հոգով, մի այնպիսի մորմօքիչ վիշտ է ընդգրկում իրեն, որ քիչ է մնում, թէ դաւաճանի իր խոստման ու հրձարւի պատերազմ գնալուց. ասաց, որ բոլոր իր սիրելիներից բաժանելը համեմատաբար աւելի հեշտ ու տանելի է իր համար, իսկ նրանից, այն չարածձի խելօք շնիկից բաժանելը շատ դժւար ու անտանելի՝ այնքան սիրում է այն անլեզու, անխօս կենդանուն, այնքան շողկապել է նրա հետ սիրով: Ընկերը խոստացաւ վերցնել նրա շնիկին ու պահել իր մօտ՝ նրանից ոչ պակաս խնամքով, մինչև նրա վերադարձը պատերազմից: Անպայման հաւատարմով ընկերոջ շիտակութեան ու խոստման, պօրուչիկ եզօրը որոշեց իր շնիկը տալ նրան: Վերադառնալով տուն, կանչեց դենշչիկին ու ասաց՝

—Մեր ճանապարհները բաւականին ձգձգեց. ուշանալ այլ ևս անկարելի է. վաղն առաւօտեան պէտք է ճանապարհ-

ւենք անյապաղ: Տանելու իրերից բան չը մոռանաս այստեղ. պատրաստ եղիր նշանակած ժամին. հասկացար:

—Այո, ճիշտ այդպէս է, ТАКЪ ТОЧНО, ձերդ ազնուութիւն:

—Մեր Բուստօնին այսօր երեկոյեան տար տուր պօրուչիկ Բուստիովսկուն. նա մնալու է այստեղ. կը պահի մինչև մեր վերադարձը:

Լսելով իր անունը, Բուստօնը սրեց ականջները, յառեց աչքերը պօրուչիկին ու սկսեց շարժել պոչը:

Պօրուչիկը քորել սկսեց իր ճակատը ու այդպիսով ծածկեց աչքերը, որպէսզի դենշչիկը չը նկատի նրա յուզմունքը:

Դենշչիկը փոխանակ իր մեծի հրամանը ճշտութեամբ կատարելու պատրաստակամութիւն յայտնելու, սկսեց լաց լինել ինչպէս երեխայ:

—Ի՞նչ պատահեց քեզ հետ, ի՞նչու ես լաց լինում, — հարցրեց պօրուչիկը, — երեխայ հօ չես:

Նա շարունակեց հեկեկալ:

Բուստօնը, երկուսի մէջ տեղը կանգնած, հայեացքը մին մէկին էր ուղղում, մին միւսին:

—Ձերդ ազնուութիւն, պարօն, ւ՛ ձերդ ազնուութիւն— ասաց հեկեկալով դենշչիկը:

—Ի՞նչ է. ասա, մի քաշիր. երևի դժւար է քեզ համար Բուստօնից բաժանելը:

—Թոյլ տւէք, ձերդ ազնուութիւն, մեր Բուստօնին տանել մեզ հետ պատերազմ, — ազաչեց դենշչիկը:

—Բուստօնն այնտեղ մեզ եապօնացիներից պաշտպանելու է, ի՞նչ է, — հարցրեց հեգնաբար պօրուչիկը:

—Այո, ճիշտ այդպէս է, ТАКЪ ТОЧНО, ձերդ ազնուութիւն — պատասխանեց արտասաւխառն աչքերով դենշչիկը՝ առանց մտածելու, մեքենաբար, սահմանաւճ ձևով:


—Մեր Բուստօնը մեն-մենակ պատերազմելու է եապօնացիների դէմ Մանժուրիայի դաշտերում, չէ՞:

—Այո, ճիշտ այդպէս է, ձերդ ազնուութիւն:

—Նապօնացիները մեր Բուլտօնին տեսնելուն պէս փախուստի են դիմելու, ի՞նչ է:

—Այն, ճիշտ այդպէս է, ձերդ ազնուութիւն:

—Նապօնական քաջարի զօրքն իր ամբողջ կազմով յեա է



նահանջելու մեր Բուլտօնի առաջին. նոյն իսկ ինքը մարշալ Օյեաման*) փախուստի է դիմելու Բուլտօնին տեսնելուն պէս, չէ՞:

*) Նապօնական զօրքի գլխաւոր հրամանատարը:

—Այն, ճիշտ այդպէս է, ТАКЪ ТОЧНО, ձերդ ազնուութիւն, —պատասխանեց առանց մտածելու հեկեկացող դենշչիկը:

—Լաւ, —ասաց պօրուչիկը, — երբ այդչափ քաջ, սքանչելագործ ու անյաղթ է մեր Բուլտօնը, նրան կը տանենք պատերազմ: Դենշչիկ Ստարիկովը ժպտաց, սրբեց արտասուքը. նրա երջանկութիւնը կատարեալ էր:

VIII

Մտերիմ բարեկամները ճանապարհւեցին պատերազմ: Ճանապարհին շեղւեցին դէպի այն գիւղը, որտեղ ապրում էին պօրուչիկի այրի մայրը ու նրա բոլոր միւս մերձաւորները: Պօրուչիկը գնաց մօր օրհնութիւնն ստանալու ու մնաս բարև ասելու, գուցէ իր վերջին մնաք բարևն ասելու ծերունի մօրն ու բոլոր իր սիրելիներին:

Նրանք իրերը թողեցին երկաթուղու կայարաններից մինում ու գնացին Գարգմանաց երկրի լեռնաստանի խորքերում գտնուող հինաւուրց գիւղը:

Մի քանի օր պօրուչիկը մնաց իրենց տանը: Նա բոլորի սիրելին էր, ոչ միայն իրենց անեցիկները: Գիւղացիները անչափ սիրում էին պօրուչիկ Նգօրին և այդ ոչ թէ նրա համար, որ նա պետական զօրքի օֆիցեր էր, այլ այն բանի, որ պօրուչիկը վերին աստիճանի բարի, համեստ ու մարդասէր էր, անչափ պարզ էր ու մատչելի, բոլոր գիւղացիներին պատում ու յարգում էր ինչպէս իր հարազատներին, ոչ ոքի թոյլ չէր տալիս ասել իրեն «աղա» կամ «բէզ». պահանջում էր, որ իրեն ուղղակի Նգօր ասեն, չէր խղում իր մտերիմ ընկերական կապերն իրեն հասակակից այն գիւղացի երիտասարդների հետ, որոնց հետ միասին մի ժամանակ հօտազուլութիւն, հորթարածութիւն ու տաւարածութիւն էր արած իրենց սարերում ու դաշտերում, միասին խուրձ ու խոտ էր կրած հանդից: Գիւղում գտնւած դէպքում պօրուչիկն իր ժամանակը մեծ մասամբ նրանց հետ էր անցկացնում. առանց իր մտերիմ Զալալանց Սողու, Մրգանց Անուշի, Անեանց Վանիի, Բա-

587X
5001



դալանց Գէորգի, մանաւանդ Սողո, որը լաւ պիտու ածող էր, օր չէր անցկացնում:

Պօրուչիկը գիւղում անցկացրեց մօտ երկու շաբաթ. նա որոշել էր մնալ ամենաշատը մի շաբաթ, բայց մօր ու մերձաւորների արցունքն ստիպեց նրան մնալ հայրենի գիւղում որոշած ժամանակից այդքան աւել: Նա իր վաղեմի ընկերների հետ այցելեց այն բոլոր վայրերը, ուր նրանց հետ միասին անց էր կացրել հորթարածութեան ու հօտաղութեան քաղցր օրերը, միասին գարնանը ձնծաղիկ, խլոպոզ, սանդղոզիկ ու ձնեփակ քաղելու էր գնացած յաճախակի, իսկ աշնանը զկեռ,



հուն, սզգան, սիզն ու քօլատանձ: Բոլոր վայրերում նրանք քէֆեր արին՝ գոռնա-դաւալով, պիւով, որով նւագում էր պօրուչիկի մտերիմ Զալալանց Սողին, հրացանաձգութեամբ:

Պօրուչիկի բոլոր զբօսանքներին մասնակից էր նաև Բուտօնը, որը թէ գիւղում և թէ գիւղի շրջականերում վազում էր միշտ իր պօրուչիկի առաջին. երբեմնակի քայլում էր ծանր՝ հպարտ, խրոխտ արտաքինով, հանդիպող շների ուղղութեամբ

մոռալով. պօրուչիկի հրամանով յաճախակի կանգնում էր յետևի ոտների ու նստաւածքի վրայ ու զինւորական պատիւ տալիս սրան-նրան, որով մեծ զւարճութիւն էր պատճառում բոլորին:

Չը նայած, որ օտարական նորեկ հիւր էր, Բուտիկը գալուն պէս տիրացու պօրուչիկենց բակին, որտեղ արթուն, զգաստ պահապան դարձաւ զիշեր ու ցերեկ, զիշերներն առաւելապէս. ընթրում էր պօրուչիկի հետ ու յետոյ գնում պատըշգամբի սիւնի տակին դիրք մտնում, որտեղից իր սուր հայեացքով ընդգրկում էր ամբողջ բակը, ոչ ոքի թոյլ չէր տալիս մօտենալ իրենց բակին, մանաւանդ շներին, որոնց վրայ հաշտ աչքով նայել բնաւ չէր կարողանում ու պատահած դէպքում միշտ կռւում էր: Նա իր կռւասիրութեամբ յայտնի դարձաւ հէնց առաջին օրը, երբ կռեց պօրուչիկենց ազգականների շան հետ, որը մի ամեհի շուն էր, մի կատարեալ գազան, անուշով Առիւծ: Հէնց այդ օրից նրա հետ ընդհարել սկսեց ամեն օր, քանի որ օրը մի քանի անգամ նկատում էր նրան իրենց բակում կամ բակին մօտենալիս: Ընդհարումները երբեմն վերջանում էին կատաղի կռուով, որից տուժողը Առիւծն էր լինում, քանի որ մեծերը՝ ցերեկն էր պատահում կռիւր, թէ զիշերը՝ իսկոյն օգնութեան էին հասնում Բուտօնին: Պօրուչիկը շատ աշխատեց ընտելացնել նրան Առիւծին, հաշտեցնել հետը, բայց ի դուր. Առիւծն ըստ երևոյթին տրամադիր էր հաշտ ապրել Բուտիկի հետ, լաւ հարեանութիւն անել. իսկ Բուտօնը ոչ. տեսնել անգամ նրան չէր ուզում. ոչ ինքն էր նրանց բակով անցնում, ոչ նրան էր թոյլ տալիս մտնել իրենց բակը կամ մօտենալ բակին ուոյն իսկ: Այդ անհաշտ թշնամութիւնից Առիւծը շատ բան էր կորցնում, իսկ Բուտօնը ոչ. հրնարաւորութիւն չունենալով առանց անախորժութիւնների գալ պօրուչիկենց բակը, Առիւծը զրկւում էր այն ոսկորներից, որոնք առատօրէն դուրս էին նետւում պօրուչիկենց խոհանոցից. մինչև Բուտօնի գալը այդ ոսկորները միմիայն նա էր վայելում: Բուտիկը եկաւ թէ չէ, համ ոսկորներին տիրացաւ,

համ բակին ու, չը նայած իր փոքրութեան, իր յանդուգն քաշութեամբ անչափ դժւարացրեց Առիւծի այցելութիւնները, որոնք գաղտագողի արշաւանքների բնոյթ ստացան շուտով: Ասենք Բուտօնն իսկի ոսկորներ չէր ուտում. նա ամեն օր մածոն, կաթնափոփի ու եփած կամ ապակած միս էր վայելում իր պօրուչիկի հետ, որը յաճախակի նրան մեղրը, կարագ, սեր ու գաթայ էր ուտեցնում նաև. ոսկորներից բարակներն ու հիւթալին էր ուտում միայն. մեծերը մնում էին աղբի արկղում թափած:

Երբ Առիւծը սաստիկ սովում էր, վաղօրօք հաշտում էր Բուտօնի հետ ընդհարելու անախորժութեան հետ ու գաղտագողի գալիս պօրուչիկենց բակը. մօտենում էր աղբի արկղին՝ այնտեղ ոսկոր կամ ուտելու մի ուրիշ բան փնտրելու համար: Բուտօնը, երբ Առիւծի քոռ բախտից տանն էր լինում, նկատելուն պէս իսկոյն մօտ էր վազում ու սպառնում նրան մռուցով. Առիւծը նոյնպէս մռուում էր, բայց կուելուց խուսափում էր ամեն կերպ: Բուտօնը մօտենում հրում էր նրան նոյն իսկ, բայց նա ոսկոր գանելու տենչով բռնկւած, համբերութեամբ տանում էր մռուարով Բուտիկի այդ յանդգնութիւնը ու մի բան գանելուն պէս առնում էր ու փախչում իրենց բակը: Այդ ժամանակ Բուտօնը հաշարով մի քանի քայլ վազում էր նրա ետևից, ու երբ նա իրենց բակն էր մտնում, կանգնում էր տեղը, հաշում, երկար հաշում նրա ուղղութեամբ ու յետևի ոտներով փորում գետինը, կարծես ասելիս լինէր՝ «տեսէք, տեսէք, էն անագին դմբօյին ինչպէս փախցրի. Բուտիկի հունարին ու քաշութեան թամաշա արէք զիփոց էլ»...:

Այն ժամանակ, երբ Բուտօնը մօտենում էր Առիւծին, բաւական էր մի փոքր քաշալերանք ետևից, որ իսկոյն բռնի նրան, իր ամենի հակառակորդին: Սկսւում էր սոսկալի կռիւ, քօյօլ, որից Բուտօնը յաճախակի պատուով էր դուրս գալիս, թէև երբեմն յաղթւում էլ էր: Նրա ոյժը ոչ միայն նրա սրտի ու ձկուն մկանների մէջ էր, այլ և նրա անչափ սուր առամ-

ների, որոնցով ոչ միայն Առիւծին էր յաղթում, այլ և ուրիշ նրա պէս ամենի շների ու նոյն իսկ ստիպում նրանց փախուստի դիմել:

Երբեմն, երբ Առիւծը բան չէր գտնում պօրուչիկենց բալում, երբ բոլորովին մաղբուն ու ձեռնունայն էր մնում, գայ-



բացած թէ այդ բանից և թէ իրեն ապրուստից զրկող իր մօտ մռուացող Բուտօնից, վերջինիս բռնում էր բոլոր ոյժով ու աննկարագրելի կատաղութեամբ և այգպիսիով երկու անհաշտ թշնամիների մէջ սկսւում էր օրհասական կռիւ: Այդ ընդէին իսկոյն վրայ էին հասնում մեծերը ու նրանց ետևի ոտներից բռնելով և ձգելով կամ վրաները ջուր ածելով բաժանում իրարից: Բաժանում էին նաև ծեծելով. ծեծում էին միայն խեղճ Առիւծին, ծեծում անխնայ, անողորմ, ինչով որ ըլի՝ մահակով, բահով, թէ կուրի ժամանակ, թէ կուրից յե-

տոյ: Բուտօնին մատով անգամ չէին դիպչում: Ընդհակառակը դեռ փաղաքշում ու փայփայում էին նրան: Երբ այդպիսի դէպք գիշերն էր պատահում, Բուտօնն անօգնական չէր մնում դարձեալ: Իսկոյն արթնանում էին ու վրայ հասնում դմբելու, գանակոծելու Առիւծին:

Խեղճին ամենից շատ ծեծում էր ինքը Թիւնի ամին, Առիւծի տէրը, որն անչափ սիրում էր պօրուչիկ Եգօրին:

—Ստակես դու, ստակես. միսդ կերել ես, ի՞նչ ա, որ կուռում ես մեր Եգօրի շան հետ, — ասում էր նա ու անխնայ հարւածում Առիւծին:

Խեղճ Առիւծը ջարդւած կողքերով գնում պառկում էր գոմում՝ մի ուրիշ յարմար ժամանակ Բուտօնից իր վրէժը առնելու յուսով:

Ուղիղ երկու շաբաթ պօրուչիկը մնաց գիւղում, իր սիրելիների մօտ, ու համարեա օր չի անցաւ առանց Բուտօնի կռիւների, որոնք մեծ զարճութիւն էին պատճառում բոլորին էլ:

—Հը՛, մեր Բուտօնը կը յաղթի եսպոնացիներին, չէ՞, — հարցրեց կատակով Բուտօնի մի յաղթական կուրից յետոյ պօրուչիկն իր դենշչիկին:

—Այո՛, ճիշտ այդպէս է, ТАКЪ ТОЧНО, ձերդ ագնուութիւն, — պատասխանեց դենշչիկը ձգելով ու գինւորական պատիւ տալով իր պօրուչիկին:

—Մարշալ Օյեաման անկասկած գլխակոր կը փախչի մեր Բուտօնի առաջին, չէ՞:

—Այո՛, ճիշտ այդպէս է, ձերդ ագնուութիւն, — պատասխանեց ամենայն լրջութեամբ դենշչիկը՝ խիստ հպարտ Բուտօնի քաջագործութիւններով:

IX

Քիւղի շրջակայ անտառներում, սարերում ու ձորերում Բուտօնն այն երկու շաբթւայ ընթացքում շատ զբօսանքներ կատարեց իր պօրուչիկի հետ: Այնտեղ անթիւ եղնիկներ կային: Բուտիկն ու նրանք այն կարճ ժամանակամիջոցում իրար

հետ մօտիկ ծանօթացան, իրար ընտելացան բաւականին: Սկզբում եղնիկները փախչում էին Բուտօնի առաջին. նա էլ նրանց ետևից ընկած լուռ, առանց հաջելու, ամբողջ վերստեր էր չափում. ձորից ձոր, ժայռից ժայռ ու սարից սար էր քրշում նրանց: Այդ նկատում էր, երբ եղնիկներին առաջն առած դուրս էր գալիս անտառից բաց տեղերը: Պօրուչիկն իր ուղեկիցներով նստում էր մի բարձր ժայռի վրայ ու հեռադիտակով նայում, դիտում՝ Բուտօնին ու իր առաջին կայծակի արագութեամբ փախչող եղնիկներին, որոնց թիւը երբեմն եօթ-ութի էր հասնում: Մի օր Բուտօնը անտառների խորքերում կորաւ, անհետացաւ իր եղնիկների հետ միասին: Պօրուչիկն ու նրա ուղեկիցները կանչեցին, կանչեցին նրան երկար. «Բնւտօն, Բնւտօն. ա՛ Բուտօն», — աղաղակեցին նրանք անթիւ անգամ, այս ու այն ձորն ընկնելով նրա ետևից. շատ կանչելուց անտառապահ Անուշի ձայնը կարեց համարեա: Յոգնեցին կանչելուց ու փնտրելուց: Նրան դտնելուց յոյսերը կտրեցին ու դատարկ վերադարձան գիւղը, կարծելով, թէ Բուտօնին կորցրին յաւիտեան: Թւում էր, թէ գայլերը ձանկած կը լինեն նրան ու պատռտորած: Չը կասկածելով այդ բանում, դենշչիկ Ստարիկովը սուգ ու շիւանով վերադարձաւ տուն: Նրան մխիթարել չէր լինում: Բայց Բուտիկը չը կորաւ. բաւականին ուշ, գիշերւայ կիսին համարեա, նա մեն-մենակ վերադարձաւ տուն, որտեղ մեծ հրճանքով հանդիպեցին նրան: Նրա գօրեղ բնագդըն ու անչափ նուրբ հոտառութիւնը նրա ուղեցոյցն էին դարձել անտառների այն մութ խորքերում, իսկ անվեհեր քաջութիւնը նրա ընկերը:

Նրան համարեա ամեն օր պատահող եղնիկները լաւ ծանօթանալով նրա հետ, տեսնելով, քիչ-քիչ համոզւելով, որ նա իրենց վնասել անկարող է, այնքան ընտելացան նրան, որ էլ չէին փախչում նրա առաջին. մի քանի քայլ առաջ էին գնում, կանգնում, յետ նայում ու գլխների և պոզերի շարժումներով նրան սպառնում: Բուտօնը կանգնում էր, մի քանի քայլ նը-

րանցից հեռու, ու հաշում նրանց վրայ: Պատահում էր, որ եղնիկները չէին սպառնում նրան. մի քանի քայլ փախչելուց յետոյ կանգնում էին, յետ նայում, դիտում նրան ու անհաստատ քայլերով, պարանոցները մեկնած, գլուխները կախած ու աչքերը նրա վրայ բևեռած մօտենում էին նրան: Բուտօնն սկզբում մի քանի քայլ յետ էր փախչում. բայց ասեսելով, որ



եղնիկները չար մտքով չեն մօտենում իրեն, զգոյշ քայլերով շարժւում էր դէպի նրանց: Վերջապէս նրանք մօտենում էին միմեանց ու իրար հոտոտելով ողջագուրում ինչպէս մտերիմ բարեկամներ...

Ճ

Երկու շաբաթն անցաւ ինչպէս մի քաղցր կարճասէ երազ: Պէտք էր ճանապարհել պատերազմ:

Երկար տատանւելուց յետոյ պօրուչիկը որոշեց Բուտօնին թողնել իրենց տանը, գիւղում. հեշտ չէր նրան Կովկասից մինչև Մանժուրիա տանելը, իսկ այնտեղ շատ դժւար ու անյարմար կը լինէր նրան պատերազմի դաշտում ման ածելը. շնիկը հեշտութեամբ կարող էր պատահական գնդակի կամ ումբային պայթիւնի գոհ գնալ: Իր հաւատարիմ փոքրիկ ընկերից բաժանւելը շատ դժւար էր նրա համար, համարեա նոյն չափ, ինչքան իր ամենամօտիկ մերձաւորներից բաժանւելը:



Երբ պօրուչիկը յայտնեց դենշչիկ Ստարիկովին Բուտօնին գիւղում թողնելու որոշումը, նա աղիողորմ լաց ու կոծ սկսեց. դարձեալ սկսեց թոյլաւութիւն աղերսել պօրուչիկից՝ տանել Բուտօնին պատերազմ:

Պօրուչիկի մայրը, եղբայրներն ու քոյրերը մեծ դժւարութեամբ հանգստացրին նրան, խոստացան նրա պէս սիրով ու խնամքով պահել պահպանել Բուտօնին՝ մինչև նրա ու նրա պօրուչիկի ողջ-առողջ վերադարձը պատերազմից: Ճանապարհորդների պատրաստւելու ըրպէններին Բուտօնն էլ էր պատրաստւում ճանապարհելու. նա պատշգամբում ու բա-

կում դէս ու դէն էր անում իր պօրուչիկի հետ. ուրախ ու կայտառ էր անչափ: Պօրուչիկի պահանջով մի քանի անգամ կանգնեց նոյն իսկ յետեի ոտների վրայ ու գինւորական պատիւ տւեց նրան, մեծ զւարճութիւն պատճառելով շրջապատողներին:

Երբ հասաւ ճանապարհելու ըրպէն, պօրուչիկը ներս

տարաւ Բուսօնին սենեակներէից մինը, որի անկիւններէից մէկում գտնուող կախարանից կախել էր մի գոյգ իր հանդերձեղէնից. պսպղուն կոճակներով ու ոսկեգօծ ուսակալներով փայլող իր համազգեստներէից մինը թողել էր նա մօրն ու միւս մերձաւորներին քաջալերելու և մխիթարելու համար՝ իբրև զբաւական ու նշան իր վերադարձի: Ներս մտնելուն պէս նա հրամայեց Բուսօնին գնալ նստել այն անկիւնում, որտեղ կախած էր իր օֆիցերական համազգեստը: Շնիկն իսկոյն կատարեց նրա հրամանը: Պատուիբեց անշարժ նստել այնտեղ ու պահպանել իր տիրոջ գոյքը: Բուսօնիկը մնաց անշարժ նստած ու աչքերը յառած իր պօրուչիկին:

Մեծ դժւարութեամբ զսպելով արտասուքը, պօրուչիկը մօտեցաւ նրան, երկու ձեռքով քնքշութեամբ վերցրեց, բարձրացրեց ու համբուրեց աչքերից, ճակատից ու թաթիկ-

ներից, վայր դրեց յետոյ ու հրամայեց, որ հանգիստ նստի իր անկիւնում: Երբ պօրուչիկը համբուրում էր նրան, նա լիզում էր նրա դէմքը:

Տնեցիները պատշգամբից, լուսամուտով, ակնատես եղան այդ յուզիչ տեսարանին: Նրանք լուռ արտասու-

ցին, աշխատելով ծածկել իրենց յուզմունքը:

Երբ պօրուչիկը շարժեց իր քայլերը դէպի դուրս, Բուսօնը նրան հետևելու փորձ արաւ: Պօրուչիկը նկատելուն պէս յետ նայեց, մատով սպառնաց հանգիստ նստել ու արագ քայլերով դուրս եկաւ սենեակից, դուռը ետևից պինդ ծածկելով,



Գուրս գալուն պէս ներս ուղարկեց դենշչիկին՝ Բուսօնին մնաս բարև ասելու: Դենշչիկ Ստարիկովը ներս մտաւ ու երկու ըսպէից յետոյ նա, մահն արհամարհող ու պատերազմի արհաւիրքներից չը երկնչող քաջարի զինուորը, մանուկի պէս լաց լինելով դուրս եկաւ սենեակից: Պօրուչիկը լուսամուտով նկատեց, որ շնիկը դուրս գալ է ուզում Ստարիկովի ետևից. մատով դարձեալ սպառնաց նրան ու ստիպեց իր անկիւնում հանգիստ նստել: Բուսօնիկը տխուր, կասկածոտ հարցական հայեացքով նայում էր նրան: Պօրուչիկն իսկոյն հեռացաւ լուսամուտից ու իջաւ պատշգամբից բակը, որտեղ ամեն ինչ պատրաստ էր ճանապարհելու համար: Առանց կանգ առնելու բակում նա ճանապարհեց: Մայրը, միւս բոլոր մերձաւորներն ու ճանահելու եկած զիւղացիների բազմութիւնը հետևեցին նրան: Իւրդի սահմանագլխում պօրուչիկը չոքեց, ծունր դրաւ ու համբուրեց հայրենի հողը, որից զուրկ է յաւիտեան բաժանւում էր... Կանգնելով տեղից, զգացած բառերով հրաժեշտի ողջոյն տւեց նա իրեն ճանապարհող բազմութեանն ու համբուրեց

շատ շատերի հետ: Մայրը գերմարդկային ջանքերով զսպելով արտասուքը, երկար, շատ երկար համբուրեց նրան պինդ սեղմած կրծքին ու բաժանւելով ասաց՝ «Գնա, քեզ մատաղ, ուրախ սրտով գնա. Աստուած օրհնի քու ճամբէն. քու շարը թող նանը տանի, նանը քեզ ու քու զնացած ճամբին մատաղ... Որտեղ ըլես, նամուտով կաց, քեզ մատաղ»...

Վիշաք սրտի խորքում զրպած, ժպիտը դէմքին պօրուչիկը ձի նստեց ու ճանապարհեց:



XI


Պօրուչիկի մերձաւորները անշափ տխուր ու տրտում վերադարձան տուն: Ամեն կերպ աշխատում էին շարտայայտել իրենց վիշտը, չարտասուել. նրանք հասկանում էին, որ պօրուչիկը գնաց իր պարտքը կատարելու պատերազմի դաշտում, որից իր պատասխանատու կոչման արժանի զինուորը չը պէտք է խուսափի: Բայց երբեկան տուն ու ականատես եղան տիրակալորոյս շնիկի գալարումներին, բառիս բուն մտքով վայնասունին, լաց ու կոծին, այլ ևս չը կարողացան զսպել իրենց ու լաց եղան անշափ: Դեռ բակի մուտքի մօտ էին, երբ նրանց լսելի դարձաւ շնիկի կալանչ-կալանչ գայլը ներսից: Շատ ազիտորմ էր նրա կալանչոցը. երեխայի պէս համարեա լաց էր լինում նա, չանգուտում էր դուռը. աշխատում էր բանալ ու դուրս նետուել. բարձրանում էր լուսամուտը. նոյն ջանքերն ապարդիւն գործ դնում այնտեղ ու ցատկում յատակը. կրկին սկսում էր չանգուտորել դուռը:

Հարևանի հարսը պատմեց, որ շնիկն սկսեց իր ազիտորմ կալանչոցը հէնց այն ըոպէին, երբ Նգօրն իր ուղեկիցներով դուրս եկաւ բակից ու ծածկեց շրջապատի ետևում. տան ներսից սկզբում խուլ ծմրոց էր լսում, որը գնալով սաստկացաւ, ուղղակի սուգ ու շիվան դարձաւ: Պարզ էր, որ խեղճ շնիկը բնազդամբ իմացել, զգացել էր իր տիրոջ հեռանալը, ինչ որ օտար, հեռու անյայտ տեղ գնալն առանց իրեն:

Սկզբում դուռը չէին ուզում բանալ, բայց տանել նրա վայնասունը չը կարողացան. երկար տատանումներից յետոյ որոշեցին բանալ դուռը, որ նա դրսում մի քիչ ման գայ, վազվզի, հանգստանայ ու հովանայ... Պօրուչիկի եղբայր Վազգէնը բացաւ դուռը. Բուստօնը դուրս նետուեց իսկոյն: Նա ըսկսեց հոտոտել պատշգամբը. մօտեցաւ սանդուղներին ու հոտոտելով իջաւ բակը. քիչ դէս ու դէն արաւ այնտեղ ու դուրս թռաւ բակից: Վազգէնը վազեց նրա ետևից: Բուստօնը վազում էր գիւղամիջով: Վազգէնի հետ միասին մի քանի գիւ-

ղացիներ հետամուտ եղան նրան՝ տեսնելու թէ ուր է գնում: Նա գնաց պօրուչիկի հօրաքրոջ տունը. ներս մտաւ, դէս ու դէն նայեց, կալանչ-կալանչ եկաւ ու դուրս վազեց: Սյուտեղից նա գնաց գիւղի ուսուցչի տունը. դէս նայեց, դէն նայեց, կալանչեց ու դուրս վազեց: Պարզ էր, որ նա փնտրում էր իր պօրուչիկին, որի հետ վերջին երկու շաբաթեայ ընթացքում շատ տներ էր այցելել գիւղում: Զարմանալի էին անշափ նրա բնազդն ու յիշողութիւնը. նա հեւալով վազում էր մի տնից միւսը. այցելեց ու խուզարկեց այն բոլոր տները, որտեղ եղել էր պօրուչիկի հետ:

Վազգէնը ու նրա հետ շատ գիւղացիներ արտասուքը սըրբելով գնում էին նրա ետևից: Մի տեղ, գիւղի այն փողոցում, որը տանում էր դէպի քաղաքի ճանապարհը, նա կանգնեց, հոտոտեց գետինը, հոտոտեց ուշի ուշով, բարձրացրեց դունչը, հոտոտեց օդը, ծկլթաց յանկարծ, ճչաց ու վազեց դէպի քաղաքի ճանապարհը, դէպի այն կողմը, ուր գնացել էր նրա պօրուչիկը: Նա վերջապէս գտաւ իր կորուստի հետքերը: Ուղեկիցները վազեցին նրա ետևից: Բուստօնը դուրս եկաւ գիւղից ու շարունակեց առաջ ընթանալ քաղաքի ճանապարհով. նա գնում էր իր պօրուչիկի ետևից: Գնալու էր առանց նայելու, եթէ չէ բռնէին ու չը խանգարէին նրան:



Վազգէնը մի քանի անգամ կանչեց, բայց նա յետ չը նայեց բնաւ. գետինը հոտոտելով առաջ էր վազում: Վազգէնն արագացրեց քայլերը, հասաւ ետևից, բռնեց, գրկեց ու այնպէս գրկած բերեց տուն: Նա անդադար կալանչ-կալանչ էր դալիս, աշխատում էր ազատել Վազգէնի գրկից ու վազել իր պօրուչիկի ետևից քաղաքի ճանապարհով:

Տուն հասնելուն պէս Վազգէնը ներս տարաւ նրան այն սենեակը, որտեղ կախւած էր պօրուշիկի համազգեստն ու բաց թողեց այնտեղ: Փորձեց դուրս ցատկել, բայց դուռը ծածկեցին: Նւազած ձայնով կալանչ-կալանչ եկաւ մի քիչ շուտով լոեց բոլորովին, կախեց պոչը ու գնաց նստեց այն անկիւնում, որտեղ կախւած էր պօրուշիկի համազգեստը: Քիչ նստած մնաց. ծմրաց, ծմրաց, հեծկլտաց ինչպէս անչափ ծանր ու անամոքելի վշտի տէր սգաւոր. յանկարծ կանգնեց տեղից ու սկսեց լիզել պօրուշիկի վերարկւի փէշերը. լիզեց, շատ երկար լիզեց նա վերարկւի փէշերը:

Պօրուշիկի մայրը, միւս տնեցիներն ու բոլոր բարեկամները, որոնք դեռ չէին ցրւել, խմբւած դիտում էին այդ սրբ-տաշարժ տեսարանն ու արտասուում: Տեղի ունեցաւ մի շատ զարմանալի, մի չը տեսած բան, վերին աստիճանի յուզիչ, մորմոքիչ. Բուտիկի աչքերից էլ սկսեցին արտասուքի կաթիլներ գլորւել. նա էլ էր լաց լինում... Փորձեցին նրան կերակրել: Մի թիթեղեայ ամանով մածուն բերեցին նրա համար, դրեցին առաջին. նա մածունն անչափ սիրում էր. վերջին շաբաթներն ամեն օր պօրուշիկը նրան մածնով, սերով ու կարագով էր կերակրում. բայց նա չը կերաւ. մածնին չը նայեց անգամ: Կարծեցին թէ կուշտ է, քանի որ առաւօտը լաւ տրամադրութեամբ նախաճաշել էր իր պօրուշիկի հետ: Մածնի ամանը թողեցին մօտը: Բուտօնն արտասուելով լիզեց, լիզեց վերարկուն. յետոյ տխուր տրտում պառկեց նրա տակ: Մթնեց, վրայ հասաւ գիշերը. նա անշարժ պառկած մնաց իր տեղը:

Առաւօտեան վաղ նայեցին ամանին, մածունը չէր պակասել: Պարզ էր, որ աննկարագրելի վշտից տանջուող անլեզու, անխօս կենդանին կորցրել էր ախորժակը: Նա լուռ տանջուում էր ու տանջում բոլոր տնեցիներին, ամենից շատ պօրուշիկի մօրը: Պատերազմ գնացած զինւորականի տունը սգաւորների տան էր նման:

XII

Երկրորդ օրն էլ Բուտօնը ոչինչ չը կերաւ: Փորձեցին մտով բանալ նրա ախորժակը, բայց ապարդիւն. ճապարած աչքերով նայեց մսին, նայեց, բայց չը դիպաւ նրան: Զուր բերին դրին առաջին. ջրից մի քիչ խմեց ու դարձեալ պառկեց իր պօրուշիկի շորերի տակ:

Երրորդ օրը կէսօրից մօտիկ վերադարձաւ քաղաքից պօրուշիկի մեծ եղբայր ներսէս վարժապետը, որը ազգականներից ու բարեկամներից մի քանիսի հետ նրան ճանապարհելու էր գնացել մինչև երկաթուղու կայարանը: Վարժապետը, ուսուսերէն խօսելով Բուտօնի հետ, քիչ-քիչ կենդանացրեց նրան: Անչափ զարգացած իր բնազդով նա ուսուսերէնը շատ լաւ ըմբռնում էր, քանի որ նրա հետ պօրուշիկը, դենշչիկը ու միւս շփուղները միշտ ուսուսերէն էին խօսեցած:

—Ա՛ Բուտօն, — դարձաւ նրան վերադառնալուն պէս ներսէս վարժապետը, — քո պօրուշիկը գնաց պատերազմ, բայց շուտով կը վերադառնայ, դարդ մի անիլ: Քո պօրուշիկը, քո քաջարի պօրուշիկը, ինձ պատւիրեց քեզ լաւ պահել, պահպանել, ա՛ Բուտօն. պօրուշիկը պատւիրեց խելօք աչքերիցդ պահել, ա՛ Բուտօն...

Պօրուշիկ բառը լսելուն պէս Բուտօնը աչքերը յառեց վարժապետին ու սկսեց շարժել պոչը. քանի յաճախակի էր արտասանում այդ բառը, նա այնքան աւելի էր աշխուժանում, աւելի ու աւելի արագ էր շարժում պոչը: Յետոյ կանգնեց տեղից ու սկսեց լիզել պօրուշիկի վերարկւի փէշերը: Որպէսզի նա փափազն առած լինի պօրուշիկի շորերից, վարժապետը հանեց համազգեստը ու դրեց առաջին. նա սկսեց լիզել համազգեստի փայլուն ուսակալները, օձիքը, կոճակները, փէշերը: Պօրուշիկի մայրն ու տնեցիները դիտում էին այդ ու լաց լինում: Լացը սաստկացաւ այն ժամանակ, երբ պօրուշիկի մայրը յանկարծ հարցրեց նրան՝ «Եգօրն ո՞ւր ա, ա՛ Բու-

տօն. ուրան նանին ու քեզ թողել ա ուր գնացել... Բուստօնը յանկարծ կանգնեց յետևի ոտները վրայ, թաթիկները մեկնեց դէպի պատշգամբ՝ կարծես ցոյց էր տալիս այն կողմը, դէպի ուր գնացել էր նրա պորուչիկը...

Այդ օրը վարժապետին աջողակեց մի քիչ մածուն ուտեցնել Բուստիկին. փայփայելով ու փաղաքշելով, քաղցր ու խրախուսիչ տոնով խօսելով նրա հետ, նա քիչ-քիչ բացեց վշտից տանջող շնիկի ախորժակը ու նկատելի չափով թեթեւացրեց նրա վիշտը:

Մի քանի օրից յետոյ վարժապետը փորձեց նրան մանածելու տանել, բայց անաջող. նա տանից դուրս չեկաւ, չը հեռացաւ այն անկիւնից, որտեղ կախած էին պորուչիկի շորերն ու հրացանը: Պորուչիկը մի լաւ հրացան էր բերել գնդից ու թողել տանը: Ամբողջ օրերով նա այդ անկիւնում նըստում, պառկում կամ քնում էր. ուտում ու խմում էր այդ անկիւնում. օրը մի անգամ միայն դուրս էր գալիս, իջնում բակը՝ բընական կարիքին բաւարարութիւն տալու համար: Այնպիսի խուլ անկիւններ էր փնտրում այդ բանի համար, որ իրեն բնաւ տեսնող չը լինի: Սենեակը կամ պատշգամբը նա չէր կեղտոտում. նրա խելօքութեան չափ ու սահման չը կար:



Մի օր Վազգէնը մօտեցաւ այն անկիւնին, որտեղ պառկած էր պորուչիկի գոյքի հաւատարիմ պահապան Բուստօնը, վերցնելու հրացանը՝ սրբելու ու իւղելու համար: Բարի, հեզ ու հանգիստ Բուստօնը աննկարագրելի ադմուկ բարձրացրեց. հաջաց Վազգէնի վրայ, նոյն իսկ բռնեց նրա ոտից, թէև չը կծեց. մի քա-

նի անգամ վեր ցատկեց՝ արգելելու համար նրան վերցնել հրացանը: Պարզ էր, որ նա թոյլ չէր տալիս ձեռք տալ իր տիրոջ հրացանին:

Պահանջեց վարժապետի միջամտութիւնը. թախանձանօք խօսեց նա Բուստօնի հետ, փաղաքշեց, փայփայեց ու այդպիսով մեծ դժւարութեամբ թոյլտուութիւն ստացաւ նրանից վերցնել հրացանը, որը սրբեցին ու իւղեցին նրա ներկայութեամբ, նոյն սենեակում:

Հրացանը յաճախակի վերցնելու կարիք էր լինում. վատ ժամանակներ էին. Գարգամնաց երկրում էլ հայ-թուրքական կռիւներ էին պատահում այն ժամանակ: Սկզբում Բուստօնը բնաւ թոյլ չէր տալիս Վազգէնին վերցնել հրացանը. իւրաքանչիւր անգամ պահանջում էր վարժապետի միջամտութիւնը: Տեսնելով, որ հրացանը տանում են ու բերում դարձեալ իր տեղը կախում, նա ընտելացաւ այդ բանին. էլ չէր բողբում, երբ Վազգէնը հրացանը վերցնում էր անմիջապէս, առանց վարժապետի միջամտութեան: Սկզբում կամացուկ մուտում էր Վազգէնի վրայ. սակայն քիչ-քիչ բոլորովին հաշտեց նրա հետ, բարեկամացաւ նոյն իսկ, թէև ոչ այնպէս մտերմաբար, ինչպէս վարժապետի հետ:

Մի օր պորուչիկի մայրն ու քոյրերը մօտեցան Բուստօնի անկիւնին ու ուզեցին վերցնել պորուչիկի շորերը՝ դուրս տանելու, մաքրելու ու արև տալու համար: Բուստիկն աւելի սաստիկ աղմուկ բարձրացրեց, քան այն ժամանակ, երբ Վազգէնն առաջին անգամ ուզեց վերցնել հրացանը. ամենակտրուկ կերպով արգելեց ձեռք տալ իր պորուչիկի շորերին: Կանայք չը զայրացան, ի հարկէ, այլ լաց եղան. անլեզու կենդանու այդ բուռն սէրը դէպի արհաւիրքները վայրը գնացած իր տէրը քարերն անգամ կարող էր լացացնել: Եկաւ Վազգէնը, բայց նա էլ չը կարողացաւ բան շինել. հրացանը վերցրեց, բայց շորերը ոչ: Վարժապետը տանը չէր. ուրիշ գիւղ էր գնացել: Երեկոյեան եկաւ նա: Հետևեալ օրը նրան աջողակեց համոզել Բուստօնին թոյլ տալ իր տիրոջ շորերը մաքրելու ու արև տա-

լու տանել զուրսը: Շորերը զուրս տարան, մաքրեցին խոզանակով ու կախեցին արևի տակ, պատշգամբի սիւներից կապած թոկից: Բուտօնը նրանց հետ զուրս եկաւ, կանգնեց շորերը մաքրող կանանց մօտ, ուշի ուշով հեռակելով նրանց ամեն մի շարժումին: Երբ շորերը կախեցին, գնաց նստեց նրանց տակ



ու ամբողջ օրը, մինչև արևի մայր մտնելը, նստած, պառկած մնաց այնտեղ:
Պօրուչիկենց ազգական ու հարևան կանանցից մի քանիսը եկան բարձրացան պատշգամբ՝ պօրուչիկի փայլուն համազգեստը մօտիկից դիտելու: Մէկը նրանցից փորձեց շօշափել

ուկեհուռ ուսակալը: Բուտիկին իսկոյն ցատկեց տեղից ու այնպիսի թափով յարձակեց նրա վրայ ու յետ մղեց, որ խեղճ կիներ, պօրուչիկին մանուկ հասակում շատ անգամ իր գրկում պահած Սառա աքիրը, քիչ մնաց, թէ վայր ընկնի սանդուղներից:

—Է՛, ա՛ շուն, —ասաց Սառա աքիրը, —լեզուս զօրում չի որ քեզ ասեմ՝ գլուխդ հողեմ. Եգօրի շունն ես, խաթրն եմ անում քեզ: Դէ ապրես, որ նրան էգքան սիրում ես:
Երեկոյեան շորերը տարան իրենց տեղը կախեցին: Բուտօնն էլ գնաց նրանց տակ իր անկիւնում պառկեց: Այն անկիւնում յատուկ նրա համար մի փոքրիկ գորգ էին փռել. նրա վրայ էր նստում կամ պառկում իր պօրուչիկի գոյքի արթուն պահապան Բուտիկը:

Մի ամբողջ ամիս բոլորեց պօրուչիկի գնալուց: Բուտօնը բոլոր ժամանակ պոկ չէր գալիս իր անկիւնից, կարծես մեխած լինէր այնտեղից: Մի լայնաբերան թիթեղեայ ամանով շուր ունէր այնտեղ իր մօտ. հացն ու կերակուրն էլ տալիս էին այնտեղ:

Սկզբի ամսում ոչնչով չէին կարողանում գայթակղել նրան ու զուրս բերել սենեակից, զբօսնելու տանել: Վարժապետը կամաց-կամաց այդ էլ աջողեցրեց. նա կարողացաւ Բուտիկի համակրութեան կատարելապէս արժանանալ ու մրտերմացնել նրան իր հետ: Գիշ-քիչ զուրս բերեց նրան պատշգամբը, իջեցրեց բակը, զուրս տարաւ գիւղի փողոցները, շրջակաները, իրենց մօտակայ այգին:

Սկզբում նա երկար չէր զբօսնում վարժապետի հետ. յանկարծ թողնում էր նրան ու սրբնթաց վազում տուն: Վարժապետը վերագառնում էր ու տեսնում Բուտիկին իր պօրուչիկի շորերի տակ նստած: Համոզելով, որ իր տիրոջ շորերն իր բացակայութեան ժամանակ էլ մնում են անվտանգ ու անփաս իրենց տեղը, Բուտօնը քիչ-քիչ ընտելացաւ երկարատև զբօսանքներին. երբեմն ամբողջ ժամերով վարժապետի հետ միասին բացակայում էր անից: Առաջւայ պէս քաջ էր,

բայց ոչ նոյն չափ կուտայր. ամենի շներից չէր վախենում, բայց այն հպարտութիւնն ու խրոխտութիւնը չունէր, ինչպիսին նա արտայայտում էր իր պօրուչիկի հետ զբօսելիս, երբ պոչը ծայած գաւակին դրած, պօրուչիկի առաջն ընկած, շների հետ հանդիպելիս, Առիւծի հետ մանաւանդ, ամեն անգամ կուր նախաձեռնողն էր հանդիսանում ու մեծ իրարանցման մէջ գցում իր շրջապատողներին: Անտառ վնացած ժամանակը իր մտերիմ եղնիկներին պատահում էր, բայց նրանց հետ առաջայ աշխոյժ խաղերը չէր խաղում:



Պօրուչիկ բառը այնքան էր դիպած նրա ականջներին, որ կատարելապէս հասկանալի էր դարձած նրա համար. այդ բառը լսելիս նա իսկոյն սրում էր ականջներն ու անկասկած իր պօրուչիկին էր պատկերացնում իր երևակայութեան մէջ: Վարժապետը յաճախակի յիշեցնում էր նրան իր պօրուչիկին խօսելով նրա հետ նրա փոքրիկ կազմաւորին վայել մանկական թոթով լեզուով: Պօրուչիկ բառը լսելուն պէս նա սրում էր ականջները, հայեացքը բեկուում վարժապետի դէմքին ու շարժում պոչը:

Երբեմնակի վարժապետը դիմում էր նրան այսպիսի հարցերով՝

— Բուտօն, ո՞ւր է քո պալուցիկը, քո աղաւնեակը (ГДЕ ТВОЙ ПАЛЬЛУЦИКЪ, ТВОЙ ГАЛЬЛУБЦИКЪ)...

— Չարածճի Բուտիկ, ո՞ւր գնաց քո պալուցիկը, քո աղաւնեակը:

— Բուտօնչիկ, ի՞նչ է անում հիմա, ի՞նչպէս է ապրում առանց քեզ քո պալուցիկը, քո աղաւնեակը...

Այդ բառերը լսելիս Բուտօնը կանգնում էր յետևի ոտների վրայ ու տխուր հայեացքը յառած վարժապետի դէմքին՝ թաթիկները մեկնում դէպի այն կողմը, ուր գնացել էր նրա պօրուչիկը՝ կարծես դէպի քաղաքը ու երկաթուղու կայարանը տանող ճանապարհը լինէր ցոյց տալիս: Երկար մնում էր այդպէս կանգնած ու թաթիկները դէպի այն կողմը մեկնած. պատահում էր, որ նրա աչքերից գլորւում էին արտասուքի կաթիլներ...

XIII

Բուտօնին փորձելու համար մի անգամ նրա բացակայութեան ժամանակ պօրուչիկի շորերի տեղը փոխեցին. կախեցին նոյն սենեակի մի ուրիշ անկիւնում: Բուտիկը ներս մտնելուն պէս, չը գտնելով շորերն իրենց տեղում, սկսեց հոտոտելով փնտրել նրանց. գտաւ ու նստեց այն անկիւնում, որտեղ կախել էին շորերը: Մի ուրիշ անգամ դարձեալ նրա բացակայութեան ժամանակ, Վազգէնի կին Հայկանուշը, որը սիրում էր Բուտօնի հետ հանաքներ անել, պօրուչիկի շորերը տարաւ կախեց մի ուրիշ սենեակում: Վերագառնալուն պէս Բուտիկը տալն ու վրայ արաւ տունը, հոտոտելով գտաւ շորերը ու նստեց այնտեղ, որտեղ կախած էին նրանք: Շատ դժգոհ մնաց անեցիներէից: Այդ օրը բան չի կերաւ. նոյն իսկ վարժապետի թախանձանքները չը շարժեցին նրա ախորժակը. մի քանի կում ջուր լսմեց միայն: Նրա ներկայութեամբ վար-


ժապետը շորերը տարաւ կախեց իրենց սովորական տեղը: Մի սենեակից միւսը տեղափոխելիս Բուտօնն այնպէս էր վրասում նրանց չորս կողմը, հայեացքը մռռալով մին շորերի վրայ գցելով, մին շրջապատողների, որ կասես նրանց յափշտակելու եկած թշնամիների բանակով լինէր շրջապատւած: Նստեց իր պօրուչիկի շորերի տակ ու այն գիշերն էլ աչքը հուպ չը կալաւ. քանիցս անգամ վարժապետն արթնացաւ ու հայեց նրա անկիւնին. Բուտօնին քնած չը նկատեց, դէս ու դէն էր նայում՝ կասես ինչ որ անյայտ դարանից թշնամի էր յարձակւելու նրա պօրուչիկի շորերի վրայ: Այնտեղից էլ պոկ չէր գալիս համարեա. վարժապետին մեծ դժւարութեամբ էր աջողում այդ դէպքից յետոյ նրան զբօսնելու տանել: Պատահում էր, որ դեռ գիւղի ծայրին չը հասած թողնում էր վարժապետին ու վազում տուն, որտեղ վարժապետը գտնում էր նրան իր պօրուչիկի շորերի տակին կծկւած:

XIV

Մի օր տիկին Հայկանուշը նոր հանաք արաւ Բուտիկի հետ. պօրուչիկի շորերը տարաւ կախեց իր հանդերձեղէնի պահարանում: Այդ ժամանակ Բուտօնն, ի հարկէ, բացակայ էր: Վերադառնալուն պէս նա գնաց իր անկիւնը: Չը գտնելով այնտեղ շորերը, նա դէս ու դէն ընկաւ իսկոյն. հոտոտեց, տնդդեց ընդարձակ տան բոլոր անկիւնները, ամեն քիւնջ ու պուճախ. մահճակալների տակերը նոյն իսկ տնդդեց: Պահարանի մօտով մի քանի անգամ դէս ու դէն վազեց առանց բան ըմբռնելու. մի անգամ էլ վազելիս, օ գարմանք, կանգ առաւ, սկսեց հոտոտել պահարանը. յանկարծ ձշաց, ծկլթաց ու թաթիկների ճանկերով, եղունգներով, սկսեց շանգոտել պահարանի դռները. թանկագին գանձը գտել էր արդէն: Հայկանուշը մօտեցաւ, բացաւ պահարանը: Բուտօնն իսկոյն ներս նետւեց ու սկսեց լիզել վերարկի փէշերը:

Շորերը հանեցին պահարանից ու կախեցին առաջւայ

տեղը, այնտեղ, որտեղ կախել էր պօրուչիկն իր ձեռքով: Բուտօնը նստեց իր անկիւնում՝ անչափ դժգոհ տնեցիներից: Բուտօնը




լորովին կորցրեց իր վստահութիւնը դէպի նրանց, կորցրեց քունն ու ախորժակը: Դադարեց վարժապետի հետ զբօսնելու զբնալ, քանի որ իր պօրուչիկի շորերն իր բացակայութեան ժամանակ այլ ևս ասպահով չէր համարում: Բոլոր ժամանակ նստած կամ պառկած էր մտում իր անկիւնում՝ ինչ-

պէս պօրուչիկի մեկնած օրերին: Ամենաթեթիւ շրխկոց լսելուն պէս՝ գիշերները մանաւանդ, կանգնում էր տեղից, դէս ու դէն նայում ու դողում, դողում շղայնօրէն ամբողջ մարմնով՝ կասես թշնամու բանակներ էին յարձակւելու իր պօրուչիկի շորերի վրայ: Մօտենում էր յետոյ վերարկին ու լիզում փէշերը, լիզում անյագ, անվերջ ու ուժասպառ կծկում անկիւնում: Վարժապետի փաղաքշանքներն ու թախանձանքները բանի տեղ չէին անցնում. ոչինչ չէր ուտում համարեա, հազիւ էին կարողանում մի քանի կում շուր խմացնել ու երբեմն էլ մի երկու գդալ մածուն ուտեցնել: Օրէցօր Բուտիկը հալւում էր մոմի պէս, թուլանում, նւաղում:

Առիւծն ազատօրէն շրջագայում էր պօրուչիկենց բակում ու ոսկորներ ջարդում: Բուտօնն զգում էր նրա գալը. սրում էր ալանջները ու հայեացքն ուղղում դէպի լուսամուտը, բայց

չէր մոռում. մոռալու աշխոյժ չէր մնացել նրանում: Շարժե-
լու համար Բուտօնի աշխոյժը վարժապետը մի օր Առիւծին



հաց գցելով պատշգամբ կանչեց: Ա-
ռիւծը բարձրացաւ, մօտեցաւ լուսա-
մուտին, որտեղից նկատելով ներ-
սում նստած իր ախոյեանին, սկսեց
մոռալ՝ հպարտօրէն ծալած պոչը սեղ-
մելով դաւակին: Սպասում էին, որ
Բուտօնը կը ցատկի դէպի Առիւծը.
բայց նա տեղից անգամ չը կանգնեց.
մարտոյ հայեացքը դարձրեց դէպի Ա-
ռիւծը ու նւաղած ձայնով նււաց մի-
այն: Առիւծի պոչն իսկոյն թուլացաւ.
նա լռեց. մի երկու ըոպէ ապշած դի-
տեց իր հակառակորդին մեղամաղձոտ
հայեացքով ու յետոյ պոչը ցած թո-
ղած գլխակոր իջաւ պատշգամբից:

Հետեալ օրը վաղ առաւօտեան
անեցիները Բուտիկին անշնչացած գը-
տան իր պօրուչիկի շորերի տակ:



Հնկերով թեանս հրատարակութիւնները.

1. Լ. Ուօլլէս. Բէն Հուր. հ. 1. Թարգմ. անգ. Փ. Վարդանեան.	— 75
2. Նոյն, հ. II.	— 75
3. Շիրվանզադէ, Արտիստը.	— 25
4. Մուրացան. Գէորգ Մարգարտունի, պատմական վէպ.	1— 20
5. Ժուկովսկի. Քնած արքայադուստրը, պատկերազ. հէքեաթ. փոխադր. Ա. Թ. Մնկոյեան.	— 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմաւածքներ	— 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ.	1— 20
8. Ն. Բուբակին. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկկենս. Դաւիթ Կօպպէրֆիլդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. թարգմ. Փ. Վարդանեան.	— 75
10. Նոյն, մասն երկրորդ.	— 75
11. Նոյն, մասն երրորդ.	— 75
12. Շիրվանզադէ. Երկերի ժողովածու, հատ. IV.	1— 50
13. Դ. Դեմիրճեան. Բանաստեղծութիւններ.	— 50
14. Ոսկէ Աղլիկը, թարգմ. Լ. Մելիք-Աղամեան.	— 7
15. Ա. Բօզաթ, թարգմ. Ս. Թորոսեան.	— 15
16. Ստեփաննոս Նազարեանի երկերը, հատոր I.	1— 50
17. Սպիտակ տառեղնիկը, փոխ. օր. Ն. Գրիգորեան.	— 20
18. Ստ. Տէր-Աւետիքեան Բուտօնը.	— 25

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Գաբրիէլ ԳԱՆՈՒՆԵՅԻՑ. Զիօհօնդա. ողբ. 5 ար. Ֆրանս. թարգմ. Ս. Յակոբեան:	
2. Իլիա Ճաւաւաձէ. Մուրացիանի պատմածը. վրաց. թարգմ. Տ. Փրոուսեան:	
3. Ա. Ահարոնեան. Աստու կրակը:	
4.— 5. Իւշիկիչ. Թագաւոր. ոռւս. թարգմ. Յ. Յովհաննիսեան:	
6—8. Մախլասեան. Յանցանքը:	
7. Աէյրի. Ծիլ ու ծաղիկ:	
8—9. Կոմս Ա. Կ. Տօլստոյ. Իօանն Ահեղի մահը. ողբ. 5 ար., ոռւս. թարգմ. Տ. Յովհաննիսեան:	
10. Անտօն Չեխով. Պատմաւածքներ. ոռւս. թարգմ. Ռ. Սան-Աղատ:	
11-12. Ա. Ս Գրիբաեդով. Սելքից պատուհաս, կոմ. չորս գործ. ոտանաւորով. թարգմ. Լ. Մանուէլեանի:	
13. Լորդ Բայրոն. Մանֆրէդ. անգլ. բնագրից թարգմ. Տիրայր վարդ.	
14. Գիլը Մոպսսան. I Ճարպագունդը, II Զարդը. ֆրանս. թարգմ. Ռ. Սան-Աղատ:	
15. Վալդեան. Բժիշկը. գրամա 3 գործ.:	
16-17. Կնուա Համսուն Պան. Լէյտընանտ Թոմաս Գլանի թղթերից. գերմ. թարգմ. Ա. Իսահակեան:	
18. Մարգար. Վէպիկներ:	
19. Թերուս կնոջ խոստովանքը, տ. Ն. Աթայեանի:	
20. Ֆեօգեր Իօաննովիչ արքան, ողբ. 5 ար. թարգմ. Տ. Յովհաննիսեան:	
21, 22, 23. Հերման Զուգերման, Հոգար, գերմ. թարգմ. Գ. Ալթունեան:	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Զարգացատիկ թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան.	— 8
2. Նահապետական տուն, Մովսէս Զուխանեանց.	— 5
3. Գործակատար Մարտիրոսը, Ս. Մ. Շահնազարեան.	— 7



«Ազգային գրադարան»



NL0405524

13354